

# Հ Ն Չ Ա Կ

## ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

### .Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը.

(Յօդուած առաջին.)

Ներկայ բողոքին, երբ անորոշ զգացումների և երկիւղալի վարանման ու մասամբ վհատութեան մէջ է գտնուում հայ հասարակութիւնը, անհրաժեշտ է խօսել այդ արամադրութեան մասին և մի և նոյն ժամանակը մէկ ընդհանուր ու արագ ակնարկ գցել հայ յեղափոխական շարժումների վրայ՝ իրանց ամբողջութեամբ առած: Կա թերեւս սխալ դատողութիւններին վերջ դնել և պարագաների լուսաբանութեան ծառայել:

Հէնց որ սկսան տեղի ունենալ ընդհանուր կոտորածները, հայ հասարակութեան մէջ լսելի եղան արտունջներ նոյն իսկ իր մի մասի դէմ, յեղափոխականների դէմ: Այլ ու ձախ սկսան խօսել, քննադատել յեղափոխութիւնը, խօսել թեր ու դէմ: Ընդհանուր թշնամին՝ ձեռք ձեռքի տված ներքին թշնամիների հետ, որպէս և վարանոտ ու երկչոտ խելքերը սկսան յարձակվել յեղափոխական շարժումների վրայ: Նրանք ջանացին այդ շարժումները ցոյց տալ կամ համարել պատճառ կոտորածների: Գէպքերի զուգադիպութիւնն աւելի, քան յարմարաւոր յայտնվեցաւ այդ կարծիքի հաստատութեան համար: Սովորական, միջին խելքը, որ ընդունակ չէ միանգամայն ընդգրկելու եօթ-ութ տարի միմեանց յաջորդող և միմեանց պայմանաւորող դէպքերն իրանց ամբողջութեան մէջ, յարեցաւ վերջիցս կարծիքին: Նա կարծեց, թէ աղէտների բանալին գտաւ. նա կարծեց, թէ ամեն չարիք, որ պայթեց հայերի գլխին, իր ծնունդն առաւ ուղղակի յեղափոխական շարժումներից:

Այդ առարկութիւնը հայկական յեղափոխութեան դէմ մենք այստեղ ձեռակերպում ենք ամփոփ կերպով, որպէսզի ներկայացնենք նրան իր ամբողջ անողոր պարզորոշութեամբ: Այդպէս անելով, մեր առարկութիւնները, որ պէտք է հիմա առաջ բերենք, աւելի կը վստահեն, թէ և ըստ երևոյթին պէտք է ընդհակառակը թւայ: Ընդհակառակը պէտք է թւայ, որովհետեւ այդ հակառակ առարկութիւնները մեր կողմից բացորոշ ու ամփոփ կերպով ձեռակերպելով — ինչ չեն արել մինչ այժմ՝ այդ առարկութեան տէրերն իրանք

խակ, — մենք գալիս և շոշափում ենք հայկական յեղափոխութեան նոյն իսկ սկզբունքը: Բայց գաղափարի մէջ յաղթանակ տանելը չէ կարող այն եղանակով լինել, որ մենք ծածկենք, քողարկենք կամ թէ կամայական մի դոյն տանք հակառակ գաղափարին, այլ ընդհակառակը. պէտք է առաջ բերել հակառակ գաղափարն իր ամբողջ զօրութեամբն ու պարզորոշութեամբը: Այդ կերպով վարվելով — և ուրիշ կերպ վարվելն արդէն անբարեխիղճ կը լինի — այդ կերպով վարվելով, եթէ յաղթանակողը չը լինի իսկ մեզ սիրելի գաղափարը, յամենայն դէպս յաղթանակը կը պատկանէ մէկ աւելի գերազանց պահանջին, այն է՝ ճշմարտութեան, որն արդէն մայրն է ամեն ճշմարիտ գաղափարի:

Այսպէս, վերջին աղէտներից ի վեր, ասացինք, հայերի մէջ շատ խօսվեց յեղափոխական շարժումների դէմ, և մեր թշնամիներն այդ արամադրութիւնից առատօրէն օգտվեցան իրանց հակահայկական դիտումների ու շահերի համար: Նոյնն արին նաև մեր ներքին թշնամիները՝ յօգուտ իրանց հակահայեան կատաղի արշաւանքների, թէ և դրանով նրանք ակամայ խոստովանած եղան, որ հայ յեղափոխակն շարժումներ և կամ, ուրեմն, հնչակեան շարժումներ մի և նոյն բաներն են՝ երկու անուան տակ: Աթէ հասկանան նրանք, թէ այդ բանն արին, որից միշտ հրաժարվում էին, երբէք իրանց այլ ևս չեն ներկ: Անցնենք: Թողնենք մի կողմ այն սովորական, շքուն ու պարզ, բայց և այնպէս հաստատուն, առարկութիւնները, որ կարելի է անել յեղափոխական շարժումների նկատմամբ եղած դանդաանների դէմ: Թողնենք մի կողմ նաև բարոյական տեսակէտից անելիք առարկութիւնները, որոնք երբէք չեն ներում ժողովրդներին, որ սրանք իրանց կեանքի տաղնապալի, ամենակրիտիկական բողոքին ընդվիճին, վրհատվեն, փոխարէն ջանալու որոնել, գտնել, ըստ տեղի իրանց պատմական ձգտումների համար նորանոր ցոյթերի նորանոր աղբիւրներ: Թողնենք մի կողմ այդ բոլորը, որոնք իբրև լուրջ առարկութիւններ իրանց զօրութիւնը չեն կորցնում, մի զօրութիւն, որ իսկապէս զգալի է ամենաթերահաւասաններին, վհատվածներին ու թուլասիրտներին անդամ, — և դատնանք ինդրի քննու-

Թեանը մէկ ուրիշ տեսակէտից:

Ամենից առաջ՝ անկէք հեռուեալ հարցերը: Արդեօք յեղափոխական գաղափարն արդիւնք էր հայկական կեանքի՞, թէ ոչ: Իր ծագման ու զարգացման մէջ ունէ՞ր արդեօք այդ գաղափարն իր կենսական իրաւունքը՝ հաստատուած հայ ժողովրդի կենցաղավարութեան թէ քաղաքական և թէ հասարակական-տնտեսական պայմանների հիման վրայ: Մեր կեանքում պատմականապէս առաջ եկած ու սնունդ գտած գաղափար էր արդեօք նա, թէ ոչ: Հեռուաբար մեր կենսական, քաղաքական, հասարակական, մտաւոր ու բարոյական պահանջների ու ձգտումների բնական արտայայտութիւն էր արդեօք այդ գաղափարը — այո՞, թէ ոչ: Իր երևան գալն, ուրեմն, նոյնքան բնական և անխուսափելի էր արդեօք, որքան անհրաժեշտ էր և ծնունդ իր ժամանակի — այո՞, թէ ոչ: Պարզ է, որ եթէ յեղափոխական գաղափարը մեր կեանքում չունենար այդ բոլոր շարժառիթները, պատճառներն ու հիմունքները, նա երևան էլ չէր գալ: Քանի որ երևան եկաւ, աճեց ու զարգացաւ, ուրեմն, դրա համար այդ գաղափարն ունէր պարարտ ու պտորաստի հող մեր կեանքի պայմաններում: Աւ մի անգամ արդէն տեղի ունեցած լինելով այդ գաղափարի ծագումը մեր կեանքում և դրա մէջ գտնվելով իր զարգացման բոլոր նպաստաւոր հանգամանքները, կարող էր արդեօք հայերիս մէջ չը ծագել պահանջ այդ գաղափարի դործագրութեան մեր կեանքում: Անտարակոյս, այդ պահանջը պէտք է ծագէր ուշ կամ վաղ և յամենայն դէպս՝ ճիշդ իր ժամանակին. այսինքն՝ ճիշդ այն պատմական բուպէին, երբ հայ հասարակութեան նախ մի մասը, կրթված դասը, և ապա — քիչ աւելի ուշ — ժողովրդային ընդհանրութիւնը զգացին այդ գաղափարին ծնունդ ափող, նրա երևան գալու պատճառ եղող ազգային կենսական պայմանների ձգտումն ու խնայար: Այդ պատմական բուպէներին յեղափոխական գաղափարի շունչը կարծես անզգալապէս պտտվում ու փչում է օդում, շունչնով անցնում հասարակութեան ականջի տակով և աննկատելի կերպով կամաց-կամաց տարածվում նրա մէջ, թափանցում նրա սիրտը, խօսում ու դատում նրա մտքի հետ: Այդ բուպէից ի վեր այդ գաղափարը դառնում է պահանջ. նա ծանրանում է խղճի ու մտքի վրայ, և այդպիսով առաջացնում հասարակութեան միջից նախ՝ իր գիտակցական գործադրողներին և ապա՝ գրաւում է հանրային բազմութեանը, որ ոգևորված է գաղափարի շնչով: Յեղափոխական գաղափարը բնական կերպով այլ ևս ծնունդ է տալիս այն պատմական զինուորին, որը պէտք է գործադրէ նոյն այդ գաղափարի պահանջն ու

ձգտումը. այդ օրը հասարակութեան կեանքի պատմական ասպարէզում երևան է գալիս յեղափոխականը:

Բայց սակայն այդ ասպարէզը զուտ դադափարական տեսակցութիւն չէ լի: Ղա՛ կեանքն է իր բազմազանի ու բազմակերպ մեծ ու մանր երեւոյթներով, հանգամանքներով, պայմաններով, բոլորը տարբեր-տարբեր, շատ և շատ անգամ միմեանց աննպաստ, հակառակ, հերքող. ամբողջ մի շարք, միևնոյն շղթայով միմեանց հետ կապված, ամեն տեսակ ձախող ու աջող զուգադիպութիւնների ու պարագանների, դրանք՝ մաքաւող մարդկանց կամքի դէմ, այս կամքը՝ մաքաւող դրանց դէմ, և իր կողմից ևս մի կարգ մարդկանց կամքն էլ անընդհատ մաքաւման մէջ միւս կարգ մարդկանց կամքի դէմ. մէկ անընդհատ սուկալի կռիւ, մղված դոյութեան ու բարեկեցութեան համար, մղված հին կացութեան պաշտպանութեան, հին հասարակական կարգերի պահպանման համար, որպէս և միւս կողմից, ընդհակառակը, մղված մի նոր կացութեան հաստատման, հնի վերանորոգման ու փոփոխման համար. մի փոթորիկ, յարատեւ, մշտական, բնական, անխուսափելի, երբեմն խուլ ու տեւական, երբեմն աղմկայոյզ ու կործանարար: Աւ այդ բոլորը միասեղ առնված կեանք է կոչվում, կազմելով մէկ ամբողջութիւն: Իսկ այդ ամբողջութիւնն ունի իր պատմական զարգացման ընդհանուր օրէնքները, անխուսափելի, անհրաժեշտ, մէկը միւսին պայմանաւորող, մէկը միւսին ծնունդ տվող և ապա նորազոյնները հրներին քանդող ու նրանց յաջորդող պայմանները: Գաղափարն ու միտքն ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ արտայայտութիւն, մտաւոր ամփոփումն ու պատկերացումն ինչպէս այդ ամբողջութեանն, այսինքն կեանքի՝ ընդհանուր կերպով առնված, նոյնպէս և նրա առանձին երեւոյթների:

Ահա դա՛ է ընդհանուր մարդկութեան, որպէս և իւրաքանչիւր ազգայնական հասարակութեան կեանքը: Ահա դա՛ է այն, խառն ու բազմազան՝ իր մասնաւորութիւնների մէջ և սակայն մէկ և ընդհանուր՝ իր ամբողջութեան մէջ, ընդարձակ, անհուն ասպարէզը, որ կեանք է կոչվում, ուր մրկում են միշտ կիրք ու միտք, զգացում ու գաղափար, նախապաշարում ու զիտութիւն, նիւթական պայմաններ ու շահեր, մի խօսքով մարդկային կեանքի բոլոր երեւոյթներն իրանց բազմաստեակ ու նարանոր հանգամանքներով:

Աւ ահա՛ այդ ասպարէզում է, որ վերանորոգիչը, յեղափոխականը մղում է իր դժուարին կռիւը, մղում է այն՝ իր գաղափարի յաղթանակի համար, մինչդեռ այդ գաղափարը կեանքի նիւթական պայմաններից ծագելով, արտայայտութիւնն է կենցաղավարութեան նոր կարգերի պա-

հանջի, այդ պահանջն արդէն հասունացած լինելով կեանքի մէջ: Եւ յեղափոխականն այդ դէպքում հանդիսանում է իրրե պատմական մէկ անխուսափելի օրէնքի գործադրող: Կրա կրեան դաւըն ու գոյութիւնն այդ ժամանակ անհրաժեշտ ու անխուսափելի է: Եւ հէնց այդ բնական անխուսափելիութեան մէջն է նրա զօրութիւնը, որը նրան դարձնում է անպարտելի ամեն հարուածների առջև: Եւ յեղափոխականն այդպիսով ձգտում է իր գաղափարի յաղթանակը տանել: Իսկ այդ յաղթանակը նրա համար այն է, որ նա իրականութիւն տայ իր գաղափարին, տայ նրան կեանք, մտցնէ նրան կեանքի մէջ, մարմնացնէ նրան կենսական պայմաններում, և այդպիսով իր գաղափարին այլ ևս միմիայն արայայտիչի ու պատկերացնողի դերից դուրս հանէ: Եւ իր գաղափարի յաղթանակը յեղափոխականը ասնում է միշտ, քանի որ այդ յաղթանակը, այլ խօսքով՝ գաղափարին կեանքի իրական պայմաններ տալը, մի պատմական անխուսափելի ու անհրաժեշտ պահանջ է, որ բնական կերպով առաջացել է հասարակութեան կեանքի մէջ:

**Ն Պ Ա Ս Տ Զ Ե Յ Թ Ո Ւ Ն Ի .**

**Ո Ւ Թ Ե Ր Ո Ր Դ Յ Ո Ւ Ց Ա Կ .**

ԱՄԵՐԻԿԱ. — Մ ան շ է Ե ս Թ ր (Նիւ չէմալար) քաղաքի հայ գաղթականներից 31 դուրս:  
 Լ օ վ է Լ քաղաքից Կ. Կ. 2 դուրս, Օ. Դ. 1 դուրս:  
 ԲՕԼՖԱՐՄԱ. — Ուսուցիչ քաղաքի Մամաթիւղի ձևով անգանակված նպատակներից ցուցակը հետևեալն է. — 1) Ն ի ք օ ւ օ Լ Օ ր. Աստարման, Ս. Մ. 50-ական Քրանկ, չ. Գ. 10 Քր. L'Union des Peuples 5 Քր. Օր. Աղաւնիի միջոցով նաւարում 141 լէվա. Վ. Բ., Շոք. Թ. եւ Յ. Ա. 50-ական լէվ. մի խումբ պանդուխտներից 96 լէվ. Յ. Պ. եւ Ն. Ս. 30-ական լէվ. մի խումբ իմիջից 56 լէվ. Բ. Գիւղից Գ. Փ. 5 լէվ., Ուն 15 լէվ., չ. Կ. Փ., Ա. Բ., Թ. Խ., Թ. Թ., Ս. Կ., Յ. Ա., Ա. Ա., Գ. Պ. Ս. Վ. 10-ական լէվ. Կ. Պ. 10 լէվ. եւ կէս. Տիկ. Ս. Թ. եւ Տ. Մ. 6-ական լէվ. Ա. Լ., Տիկ. Ա. չ. Գ., Ջորաբաբէ և Վ. Կ., Գ. Ա., Օ. Բ., Մ. Գ., Ա. Տ., Ա. Գ., Գ. Ե., Յ. Պ., Պ. Ե., Տիկ. Է. Պ., Լ. Բ., Վ. Պ., Ս. Կ., Կ. Թ., Դօնթ, Թորոս, Կ. Բ., Մ. Օ. Փ. 6-ական լէվ. Զանազաններից 32 լէվ. Կ. Կ. 4 լէվ. Կ. Ա., Մ. Ա. եւ Կ. Պ. 3-ական լէվ. Ս. Զ., Ա. Ն., Գ. Գ. եւ Նշան 2-ական լէվ. Մակնդօսացի գործաւորներից 2 եւ կէս լէվ. Բայգում՝ եւ չ. Դ. մի-մի լէվա:  
 ՓՐԱՆՍՄԱ. — Մ օ ն ա է Լ ի Ե Ե մ ի խումբ ուսանողներից 45 Քր.:

**Հ Ա Յ Ո Ց Կ Ե Ա Ն Ք Ի Ց**

**Ի Ն Չ Ո Ւ .**

«Տէյի քրոնիկ» վերջերս հրատարակեց Պոլսէն հեռագիր մը ծանուցանող թէ սուլթանը Իզզէթի և Նազըմի խորհրդով մտադիր է վերջապէս պետական հարուածի մը դիմել ու տապալել Իզզէթեան պատրիարքը, եթէ անիկայ չը հրաժարի ինքնաբերաբար կամ շարունակէ մերժել երախտագիտական ուղերձի մը ըստօրագրութիւնը:

Վ. Պոլսոյ մեր թղթակիցներն ալ կը գրեն մեզի թէ Ազգային Վարչութեան անդամներէն ոմանք, նկատելով որ Գուռը չուզեր պաշտօնական ձևէ յարաբերութիւն հաստատել Պատրիարքարանին հետ, կրօնական և քաղաքական ժողովներու հրաժարականին խոր-

հուրը յղացած և ներկայացուցած են խառն ժողովին որ մերժեր է այդ աղետաբեր առաջարկը:

Այս լուրերուն կուգայ կը միանայ ուրիշ տեղեկութիւն մըն ալ: Հայ վաճառականներէն, սեղանաւորներէն մաս մը ամէն կերպով կը հետամտի դիւրացնելու պատրիարքին հրաժարականը, այն պատուակին տակ թէ յեղափոխական գործին շարունակութեանը համար իրենցմէ զրամ կը խնդրուի:

Իրարմէ տարբեր միջավայրերու մէջ յղացուած այս խորհուրդներն ու մեքենայութիւնները սակայն ընդհատ նուր կապով մը իրարու միացած, համերաշխաբար կ'ընդունին նպատակի միևնոյն կէտին — ջատուած յեղափոք խական շարժումին, կորուստ ազգային ազատութեան դատին: Եղբայրասիրական ինչ սրտայոյզ տեսարանն Պալատական շողորթը որ Նազըմին արիւնը խմելու պատուէքն կը տառապի — և փոխադարձը, — հայ սեղանաւորն ու վաճառականը որոնք իրենց սրտին խոր խորերէն Նազըմներն ալ, Իզզէթներն ալ ատելով ատելու ամէն զօրաւոր պատճառներ ունին — և փոխադարձը, — ամէնքն ալ եղբայրասիրական ձեռք կը մեկնեն իրարու: Իսկ ազգը առանց ձև է դժուարութեան կ'ըմբռնէ Իզզէթներու և Նազըմներու մոլեգնութեան շարժառիթները, բայց շուարած կը մնայ ու ապշած, հանդիսատես ըլլալով մեր «անկախ» դասակարգին նիզակահցութեանը անոնց, հետ որոնք արիւնկղակ սխերիմներն են մասնաւորապէս հայութեան և ընդհանուր կերպով ազատութեան:

Կարելի է մեղադրել հայ ազգը որ իր պարզամտութեանը մէջ անկարող է թափանցելու Մեհմետ-Ալի փաշա խանի և Չախմախճըրար Եօղուշիի \*) խորախորհուրդ աշխարհավարներուն խորունկ քաղաքականութեան խորին խորերը: Այդ հանձարեղ քաղաքագէտները թող ներողամիտ գտնուին հայ ժողովրդին. միամիտ է ան, իր արիւնած սրտովը միայն կը զգայ, զգացումն է որ կը մոլորեցնէ իր խելքը, ուստի և խեղճը ապշած կը մնայ տեսնելով որ իր դրամատէրները օգնութեան կը կանչեն հայ եկեղեցին — հայուն արիւնովը հիմնուած հայ եկեղեցին — որպէսզի մեռելական անհուն սև ծածկոցը նետէ Արաբիէն Եփրատ, Տիգրիսէն Միջերկրական սիւռուած հայ դիակներուն լեռնակուտակ դէզերուն վրայ, ու ետքը «մեռելոց» կարգայ և հայութեան ու քրիստոնէութեան նահատակներուն փրկութեանը համար գերագոյն ներողութիւնը պաղատագին հայցէ ելլողը սպանդանոցապետէն, գոչելով յանուն քրիստոնէութեան, յանուն հայութեան, յանուն ազատութեան՝ «Մեղայ Տէր, մեղայ, զանօրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ, և մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ»: — Ու գործը վերջանայ:

\*\*\*

Սակայն պէտք է ըսենք, մեզի հասած տեղեկութիւններուն վրայ հիմնուելով, որ մեր քաղքենի դասակարգին փոքրամասնութիւնն է միայն որ վստահելով քանի մը էֆէնտիներու քաղաքագէտ տաղանդին (՝) կը ջանայ մղել ազգը գերեզմանական քաղաքականութեան: Հիմու հիմա չենք ուզեր քննել թէ վաճառական ու սեղանաւոր դասակարգին պատկանողներուն նիւթական վնասի խնդիրը մինչև որ աստիճան կը մթագնէ անոնց մտքին սրատեսութիւնը երբ կը ջա-

1) Ընդհանուր գումարը գետնոված էր «Հնչակ» Թ. 4.

\*) Սեղանաւորներու եւ վաճառականներու գլխաւոր կեզրոնստեղծները Ղալաթիայ եւ Սթամպուլ:

նան մղել պատրիարքը սուլթանին ներումին «արժանա- նալը» քաղաքականութեան: Մենք միայն կը հարցնենք թէ պատրիարքին ընթացքին շեղումը, կամ թէ դիւ- րաթեք պատրիարքի մը ընտրութիւնը կրնայ միմէ փո- փոխել արդի կացութիւնը, և առաջ բերել վիճակ մը որ գոհացնէ գոնէ գոնէ նոյն իսկ այդ դրամատէր դա- սակարգին փափաքները, որոնց պաշտպանութեանը հա- մար են անշուշտ իրենց արդի բոլոր հոգածութիւնն ու փոխանակ ջանքերը:

Յեղափոխական շարժումին ծնունդ տուողը իզմիր- լեան պատրիարքը եղած չէ, այլ թիւրք կառավարու- թեան հայ ազգը բնաջինջ ընելու քաղաքականութիւ- նը: Ո՛չ պատրիարքի մը քաղաքական ուղղութեան յե- ղաշջումը, ո՛չ նոր պատրիարքի մը ընտրութիւնը կըր- նան փոփոխել արդի կացութիւնը: Կերտէսի մահէն ետ- քը հայկական խնդիրը չը մարեցաւ, և 1890 յուլիս 15-ին հայոց պատրիարքը իզմիրլեանը չէր: Իզմիրլեա- նին օրով չէր որ հայ եկեղեցականութիւնը մերժեց հպատակիլ սուլթանին հրամանին և չը յիշել պատա- րագին մէջ Աջգեանին անունը:

Յեղափոխական շարժումը ինչ յարաբերութիւն ունի պատրիարքի մը հետ, ով կողէ թող ըլլայ: Իզ- միրլեան Մատթէոս պատրիարք իր եկեղեցականի հան- գամանքով, արիւն չը սիրեր. բայց այդ միենոյն հանգա- մանքովը չը սիրեր նաև դրամ և պատուանշան. յե- ղափոխական շարժումին աջակիցն ու քաջակերիչը չէ, բայց սուլթանին առջև ալ քծնող ստորաբարձ եկե- ղեցական մը չէ, ուստի և հայ ազգն ալ զինքը կը պատուէ: Իզմիրլեան պատրիարք յեղափոխական չէ, այլ միայն իր պաշտօնին պահանջները կը կատարէ ինչ- պէս որ իր պարտքն է:

Բայց եթէ հրաժարի պատրիարքը և սուլթանին մէկ ձեռագործ արտաճը բազմի մայր եկեղեցին, հե- տևանքը: Աջգեաններն ու Մաքսուտները իրենց բոլոր ուժովը կրցին թուաք կանգնել յեղափոխական հո- սանքին առջև որ քշեց, տարաւ, անհետ ըրաւ զիրենք: Ո՛չ, արդի վիճակին հիմնական փոփոխութիւնը պէտք չէ վնասել պատրիարքական փոփոխութեան, կամ շը- նորհապարտ յայտարարութիւններու մէջ. այս յոյսերը տաժողները շուտով պատրանք պիտի կրեն:

\* \* \*

Բայց ուսկից փրկութիւնը: Փրկութիւնը յեղափո- խական շարժումին խելացի ուղղութեամբ անընդհատ շարունակութենէն միայն պիտի ծագի: Իրաւ է որ շատ կորուստ ունեցանք, ենթարկուեցանք ահաբեկ վիճակի մը, բայց միմէ կէս դարէ ի վեր, թողունք հնագոյն անցեալը, մեր կորուստներուն թիւը բիւրնեցով չի փո- կուիր. Հայաստանի կացութիւնը որ ժամանակ ա- ղէկտուր չէ եղած. միայն թէ ատենօք յուսահատ կը պաղատէինք, հիմա յուսալիւր կը կոռնինք: Օ՛հ, հայ յեղափոխութիւնը իր հաշիւները լաւ կը մաքրէ. շնոր- հիւ իրեն օսմանեան կայտրութիւնը հիմէն խախտեցաւ. եղաւ երկիր մը ելեւտօրէն կործանուած, առանց վարկի, առանց բանակի, առանց նաւատորմի, և որ սոսկալին է, առանց պատուի:

Մոլեգին Համիտը քանի մը տարուան մէջ կամաց կամաց ընելիք կոտորածը, շարունակութիւն անցեալին, քանի մը շարժումն մէջ ըրաւ լմնուց. այս անապա- րանքն է որ պիտի փութացնէ փրկութիւնը եթէ խե- լացի ըլլանք:

Կոտորածը ո՛չ միայն հայուն, այլ և Թիւրքիոյ ա- մէն խալամի, ամէն քրիստոնէի, ամէն հրէայի աչքերը կը բանայ: Ամէնքն ալ կը ցնցուին, կ'ահաբեկին, վասն- զի կը տեսնեն թէ ո՛վ շարժեց Երլայի արիւնկղակ ա- պուշին ճիրանները: Լօպանօֆներու ու Կեփաօֆներու զիւական ստուերները կը ծածանին Հայաստանի նախ- ճիրներուն անհուն տարածութեանը վրայ:

Մենք քաղաքագէտ մը ըլլալու անհրաժեշտ հարկ չը կար տեսնելու համար թէ հայերուն ջարդը միայն և միմիայն Աջգեանի գ-ի, Կիկոլայ Բ-ի մը թելադրու- թեամբն ու հաւանութեամբ կրնար կատարուիլ: Սա- սունի կոտորածին հետևանքներէն տակաւին մարած մարմկած մնացող գաղանը կրնար մտաբերել հայու մը մազին դպչիլ առանց եւրոպական մեծ պետութեան մը կողմէն տրուած բացարձակ հաւանութեանը: Այդ հա- ւանութիւնը միայն Ռուսիայէն կրնար գալ, ինչպէս որ դէպքերը ամէն տարակոյս փարատեցին: Ճիշտ Ռուսիոյ հաշուածին պէս Համիտը կոտորածներէն ետքը սար- սափաճար մնալով Եւրոպայի զայրոյթէն, չէր գիտեր ո՞ր փնտուել իր փրկութիւնը. այն պահուն Կիկոլայ իր արջնին վեր կ'առնէր և կը հրա-իւրէր շուարած չարա- գործը անոր ներքև ապահով ապրիլ: Քաղաքական վարպետութիւնը երևան եկաւ. օրթոտորք ձարին գրկին մէջ իսլամներու խալիֆան միայն Պուխարայի էմիր պի- տի ըլլար: Ու օսմանեան պետութեան բոլոր ժողովուրդ- ները, կը սարսռին, զգալով թէ քնուտը առանց խը- տրութեան ամենուն ալ, մանաւանդ իսլամներուն, ոսկոր- ները ջարդ ու փշուր պիտի ընէ: Ալ մնաս բարով ամէնուն համար փրկութեան, ապստութեան յոյսը: Ահ- ուելի վտանգը ամէնուն կըսպանայ, և խալամը քրիս- տոնէին ու քրիստոնեան խալամին երեսը կը նային դեղ- նած, գունատ, դողահար. փրկութիւնը այս հասարա- կական վտանգէն է:

Եւ այս ծանր վայրկեանին երբ ամէնուն աչքը կը դառնայ դէպի այն մարտիրոս ազգը որ իր քաղաքա- կան հեռատեսութեամբը կրցաւ երևան հանել հան- րութեան վտանգը, և աղմուկին ղողանջը հնչեցուց սեպ- տեմբեր 18-ին և Զէյթունի ապստամբութեամբ, երբ ամէնքը երկիւղալիւ համակրանքով կը նային հայ յեղա- փոխութեան, այդ միջոցին է որ պատրիարք տապալելով պիտի զբաղինք: Եւ ինչո՞ւ:

«ԱՍՏՈՒՐ ՄԱՍԸ.»

Կ. Պոլիս, 1 Մարտ 1896.

Տիգրան Գարակէօզեանի մահէն ի վեր բաւական ժամանակ անցաւ, ուստի կրնամ կատարեալ պաղա- րիւնով հաղորդել ձեզի հանրային զգացումին տպա- ւորութիւնը այդ եղերական վախճանի մասին:

Պօլսոյ ամբողջ հայութիւնը, քանի մը «վեմա- շուքներէ ու ազնուաշուքներէ» գատ, կարծես սփոխանք զգաց Գարակէօզեանի դէմ ուղղուած հարուածէն: Ժո- ղովուրդը իր պարզ բնազգովը մեկնեց այդ սպանու- թեան պատճառները, և միաձայնութեամբ արդարա- ցուցած զայն:

Հայ ժողովուրդին այս զգացումը բացատրելու հա- մար պէտք է յիշեցնել այն պատճառները որոնցմէ մղուած քառորդ դարէ մը ի վեր միայն արհամա- րական զգացում կը տածէր այն ընտանիքին համար, որուն ոսկիները ոչ թէ հազարներով, բիւրնեցով կը հաշուուէի, այլ հարիւր հազարներով:

\*\*\*

Պարթէ քառորդ դար մը առաջ մեռաւ Գարակէօղեաններու Կարապետ անուն մէկ եղբայրը որ խելացի և ազգասէր երիտասարդ մըն էր: Ասիկայ իր հանգուցեալ եղբորը, Բուզանդին, իրենց թողած ժառանգութենէն օգտուիլ չուզելով, կարգադրութիւն մը ըրած էր որով ազգին կը կտակուէր 40,000 ոսկի հիմնարկելու համար առևտրական վարժարան մը: Կարապետ Գարակէօղեանի մահէն ետքը իր ընտանիքին և Պատրիարքարանին միջև թղթակցութիւններու փոխանակութեամբ հաստատուեցաւ այդ կտակը: Ազգային ժողովը հանդիսաւոր կերպով շնորհակալութեան քուէ տուաւ Գարակէօղեան ընտանիքին և Ներսէս Պատրիարքին բերնով օրհնուեցաւ հանգուցեալներու յիշատակը:

Այդ օրէն ի վեր Պատրիարքներ, Ազգային վարչութիւններ, Կտակաց հոգաբարձութիւններ իրարու յաջորդեցին, և սակայն ուր է Գարակէօղեան փոխարանը: Զուր տեղը հայ մամուլը բողբոյ ձայններ բարձրացուց անդադար: Գարակէօղեանները իրենց Տիգրան եղբոր առաջնորդութեամբ մտաւորներուն մէջ պահեցին ազգին նուիրուած դրամը: Առևտրական բողբոյները լռեցնելու, եղած ձեռնարկները չեղորացնելու համար ամէն միջոց գործադրեցին: Աղէկ գիտէին թէ ազգը չէր կրնար դատ բանալ իրենց դէմ, վասն զի քանի մը հազար ոսկի ծախս կըլար «չէրի» դատարանին առջև: Գարակէօղեանները կարող էին 40,000 ոսկին չը տալու համար երկու երեք հազար ոսկի ծախսել:

Այս ուղղութեամբ էր որ 1886-ին Նուրեան երբ տոննապետ էր քաղաքական ժողովին, առաջարկեց որ Գարակէօղեաններէն 3,000 ոսկի «իրը նուէր» առնելով Պատրիարքարանը անոնց վերադարձնէ բոլոր այն թղթակցութիւնները որոնք փոխանակուած էին կըտակին աւթիւ: Այս ամօթալի առաջարկը մերժուեցաւ բացարձակապէս:

Այդ 40,000 ոսկիի գումարը տոկոսին բարդուածով այսօր ինչ թիւ կրնար ներկայացնել: Բայց ազգին դրամ պէտք չէ, այլ մարդ. քստնըհինգ տարուան մէջ քանի հարիւրաւոր պատանիներ այդ վարժարանին շնորհիւ իրենց դիրք մը ստեղծած պիտի ըլլային: Տիգրան Գարակէօղեան իր ահագին հարստութեամբ չը բաւականանալով աչքը անկեց աղքատին դրամին վրայ, ազգին աղքատիկ տղաքները զոկեց իրենց իրաւունքէն: Ու երբ գիշեր մը շնկոցը տարածուեցաւ թէ Տիգրան Գարակէօղեան վիրաւորուած է, ժողովուրդը միաձայնութեամբ վճռեց թէ «Արդարութիւնն էր որ Հնչակեան գաշունով մը լուծեց զզկուած խեղճ տղաքներուն վռէժը»:

\*\*\*

Տիգրան Գարակէօղեանի քարացած սիրտը պիտի մոլորեցնէր զինքը ճամբու մը մէջ որուն և կըլ պիտի յանգէր եղբրական անցքի մը միայն:

Անցած ամբան վերջերս էր. Հնչակեան Կուսակցութիւնը կը պատրաստուէր հայ ազգին նկատմամբ եւրոպական քաղաքականութիւնը պարզելու վճռական միջոցներ անօրինելու: Անոնք որ քանի օր վերջը իրենց մարմինները Համիտի սուխներուն առջև պիտի նետէին, անոնք զիմեցին հայ դրամատէրներու և խնդրեցին որ իրենք ալ ոչ թէ կեանքերնին, այլ իրենց ստակէն բան մը տան ազգային դատին համար: Այս դիմումը

ընդհանուր ընդունելութիւն գտաւ, ամանց կողմէն սիրալիր, ուրիշներէն արանջալիր: Շաբաթ օր մըն էր. Տիգրան Գարակէօղեանի սենեակը գացին անձնաւորութիւններ որոնք զեռ քանի մը շաբաթ առաջ զերծուած էին շղթաներէ ու քանի մը օր վերջը գուցէ նորէն պիտի պրկուէին շղթաներով եթէ չենային սուխներուն ներքև:

—Օ՛հ, այս ինչ մեծ պատիւ է որ ինձի կ'ընէք, գուցէ Տիգրան Գարակէօղեան, երբ իր դրասենեակին մէջ սեսաւ այդ կենդանի նահատակները: Շնորհակալ եմ որ իս ալ ազգասէր ճանչցաք և չմոռցաք իս: Ա՛հ, ազգը շատ սխալ կարծիք ունի վրաս. ախ, ախ, դուք ինձի միտմարեցիք վրաս ունեցած համարումներդ: Բայց ինչպէ՞ս հաճեցէք երեքշաբթի անցնելու ներդութիւնը յանձն առնել որպէս զի եղբայրս ալ հոս ըլլայ:»

Երեքշաբթի եղբայրը հիւանդ էր, ուստի հինգշաբթի օրուան այցելութիւն մը խնդրեց. հինգշաբթի ալ ինքն յանկարծ հիւանդացած էր: Ու օրերը իրարու յաջորդեցին, հասաւ սեպտեմբեր 18. Գարակէօղեան Տիգրան այդ օրը երկու ձեռքերը իրարու շիկեց. դիակներու մէջ էին թերեւս իրեն դիմոյներն ալ:

\*\*\*

Օէյթուն ձայն կարճակէր. օգնութիւն կը խնդրէր, Հնչակեան Կուսակցութիւնը ծանր պարտականութիւններու ներքև էր. դարձեալ դիմումներ անոնց որոնք առաջին հանգանակութեան չէին մասնակցած. յիշուեցաւ Գարակէօղեանի խանդավառ խոստումները, որոնք գործադրութիւնը խնդրուեցաւ. կմկմաց. դիմողները այս վարանուծի մասին մինչ ապշած էին, ահա լուսեցաւ դէպք մը: Աւճառական Մ... եան խոստացած էր 150 ոսկի տալ. յանկարծ միտքը կը փոխէ, ինչու: Ասան զի Տիգրան Գարակէօղեան անոր ձեռքէն բռնած և ըսած է. «մի՛ տար. ինէ ալ ուղեցին, խաբեցի խաբեցի, խոստացայ, չի տուի. ինչ եղաւ. հիմա դուն տալովդ գէշ օրինակ պիտի ըլլաս:» Նուիրատուն կը վախնայ Գարակէօղեանէն և կ'անայ խօսքին: Այս յաջողութիւնէն քաջալերուած Տիգրան Գարակէօղեան կը քարոզէր ամէն տեղ «գէշ օրինակ չըլլալ»: Ազգին այդ մեծ ճգնաժամին այդ թըշուառականը կը ջանար թեւակտուր ընել ազգային խանդավառութեան թռիչք, որպէս զի ինքն ալ քանի մը հարիւր ոսկի տալու պարքէն ազատի: Այս անգամ դարձեալ զրկանք կ'ընէր ազգին ուրիշին դրամով: Ինքն ալ պէտք էր «գէշ օրինակ» չըլլար: Գարակէօղեանի եղբայրասպան միջամտութիւնը եթէ մնար անպատիժ, քանիներ ու քանիներ պիտի կորսուէին: Հազարին տեղ մէկը պէտք էր կորսուէր, այս էր արդարութեան գերագոյն պահանջումը:

\*\*\*

Աւ երբ անգին Հայաստանի մէջ սովը սպառնական է, Մատթէոս պատրիարք կը դիմէ ամէն ունեւորի պատառ մը հաց ձարելու համար տառապեալ հայուն, Տիգրան Գարակէօղեան միլիոնատէրը, ազգին դրամներուն այդ յոփշտակիչը, միայն հարիւր ոսկի կը զրկէ իբր պատասխան պատրիարքին կողմէն եղած թախանձագին հրաւերին, մինչդեռ շատ համեստ կարողութեան տէր անձեր շատ աւելին յօժարակամ տրուած են: Այդ անսիրտ կծծին եթէ չէր ուղեր քա-

նի մը ոսկի աալ Զէյթունի համար, չէր կարող քիչ մը աւելի շնորհքով գումար մը պատրիարքին տրամադրութեան ներքե զնել ու զայն ըսել իրեն դիմողներուն: Բայց այն ատենն ալ Տիգրան Գարակէօզեան եղած չէր ըլլար:

\* \* \*

Ազգին աղքատիկ տղաքը իրենց իրաւունքէն զրկողը, Զէյթունի հերոսները առանց վառօդի, առանց հացի պահելու համար տարածում ընողը, Հայաստանի սովեալներուն համար անկարելիքը, երբ հաշիւ կուտայ արդարադատ դաշունի մը, ժողովրդային զգացումն որ է անոր դաժնադին շուրջը սարսափահար կը գոչէ իր ասացուածը. — «Աստուծո՛ւ մատը կայ»:»

\*\*\*

**ՍԵԼՔՈՆ ԿԵՃԵԱՆԻ ԴԵՊՔԸ.**

(Շարունակութիւն.) \*

Վ իճակս ծանր էր, բայց մտածմունքս աւելի ծանր: Կը մտածէի կերպով մը Կ. Պօլիս ամերիկական դեսպանի ազդեցութեամբ ձեռք ձգել յափշտակուած դրամները. բայց ատոր համար հարկ էր հիւպատոսին տեսնալ, և այդ էր որ զիս կը մերժէին և ամենայն ջանքով ու խաբեբայութեամբ հիւպատոսէն ծածուկ կը պահէին, որ ես ամերիկահայտակ մըն եմ: Մէկ ամսէն աւելի անցաւ իմ անտանելի վիճակս, որու միջոցին քանի մը անգամ զիս հարցաքննութեան տարին և հիւպատոս չը հրաւիրուելուն պատճառաւ շատ հարցերուն պատասխան չը տալս ի վերջոյ սկսաւ վայրացընել վալին: Հարցաքննութեան մը միջոցին հարցուց. —

— Ո՞վ է Աղասին. բռնուած նամակներուն մէջ կը կարդանք Աղասիի մը անուն, որուն պիտի յանձնէիր դրամները:

— Աղասին Հնչակեան Կուսակցութեան ներկայացուցիչն է ի կիլիկիա:

— Ո՞ւր կը նստի:

— Այդ ձեր գիտնալիք բանն է:

— Կու զայն տեսած ես:

Բացասական պատասխանիս վրայ յարեց բարկութեամբ:

— Հապա Ինչպէս և ուր պիտի գտնայիր, որպէս զի դրամներն իրեն հասցնէիր:

— Ինձ ըսուած է որ կիլիկիոյ մէջ ամբողջ ժողովուրդը կը ձանձնայ Աղասին, բացի կառավարութեան մարդերէն:

Վ ալին ատոր վրայ կատղեցաւ:

— Սուլթանի կառավարութիւնն, ըսաւ, չը համարձակիս քննադատել:

— Բննադատելիք խօսք չեմ ըներ հոս, այլ իրողութիւնը կըսեմ: Այսօր ամենու համար ակներև պիտի ըլլայ, որ այս երկրին մէջ երկու կառավարութիւն կայ. եթէ ատոնցմէ մէկը սուլթանի կառավարութիւնն է, միւսն ալ Հնչակեան Կուսակցութեան կառավարութիւնն է:

Այդ խօսքերուս վրայ վալին աւելի կատղեցաւ: Բայց ես ուշադրութիւն չը դարձնելով անոր կատարութեանը և օգտուելով իմ ամերիկահայտակ ըլլալէս շարունակեցի:

— Այսօր այդ երկու կառավարութիւններն իրարու դէմ սոսկալի կռիւ են մղած. մինչդեռ դուք չը գի-

տէք թէ ո՛ր են անոր զօրքերն ու առաջնորդները, անոնք գիտեն ձեզ ամենքդ ալ և ուշիմութեամբ կը հետևին ձեր քաղաքական և զինուորական ներքին ամեն քայլերուն և ձեռնարկներուն, իսկ դուք անոնց առաջնորդներու անունն ալ իսկ չը գիտէք: Իմացած եղէք, որ օր մը չէ օր մը դուք անոնց հետ մեծամեծ գործեր պիտի ունենաք, և այն ատեն դուք, վալի, պիտի մտածէք և ցաւիք ձեր և ձեր երկրին վիճակին վրայ: Հիմա դուք այն դրամները վերադարձնելով և իմ խնդիրներուս և պահանջներուս միշտ մերժուով պատասխանելով, գիտցէք որ ատով ո՛չ թէ Հնչակեան Կուսակցութիւնը նիւթապէս պիտի տկարացնէք, վասնզի անիկայ դրամ շատ ունի, այլ ձեր կառավարութեան գէմ պիտի աւելի գրգռէք հայ ժողովրդեան կատարութիւնը, որն այսօր այլ ևս ձեզ չէ որ կանսայ, այլ երկրին բարօրութեան համար կուռող և աշխատող Հնչակեան մարմնոյն:

Բարկութեամբ և կատարութեամբ խօսքս կտրել տալով ինձ դուրս հանել տուին: Քսան և հինգ օր մուշարան կեցայ. քաշած տանջանքներս ալ աննկարագրելի են...

Աստիկով չորս ամիս շարունակ զիս բանտը պահեցին ամեն տեսակ տանջանքներու ենթարկելով: Արեւապէս օր մը քօմիսէր մը, երկու տասնապետ, 12 սուվարի՝ ձեռքս և ոտքս շղթայ զարնելով հանեցին զիս բանտէն Իսթէնտերուն տանելու համար: Ինչ էր այդ տեղափոխութեան պատճառը և ուր պիտի զիս տանէին ես դեռ չէի հասկնար, միայն վերջն իմացայ, որ ամերիկեան հիւպատոսն խնդիրը տեղեկացեր է, իմ ամերիկահայտակ ըլլալս ալ ստուգեր և տեղեկագրեր է ամերիկական դեսպանին Կ. Պօլիս: Ասիկա իր կառավարութենէն իրաւունք է ստացեր մարտանաւ մը զրկել Իսթէնտերունի ջրերը և միւսնոյն ատեն զիս իրեն յանձնելու ստիպողական պահանջն է ըրեր: Հետեւալ օրը մէկ քօմիսէր, երկու տասնապետ, 18 սուվարի և 80 զօրք շրջապատելով զիս ամեն կողմէ ձանբայ հանեցին դէպ Իսթէնտերուն: Մէկ մարդու համար այդպիսի չը տեսնուած հսկողութիւն զարմանալի չէ թըւիր երբ ըսեմ որ յափշտակած դրամին խնդիրը շատ մեծ տպաւորութիւն թողած էր թէ՛ կառավարական շրջանակներու և թէ՛ թիւրք և հայ ժողովրդեան վերայ. ամբողջ ամիսներ ժողովուրդն այդ խնդրով կը յուզուէր և կառավարութիւնը միշտ երկիւղի մէջ էր: Ամերիկեան դեսպանի խիստ պահանջներն և մարտանաւեր հասնելու սպառնալիքներն ալ այդ յուզումն հաստատեցին իր ծայրայեղութեան: Աւելացուցէք ատոր վրայ այն ևս որ այդ ատեններն էր իսկ որ տեղի կունենային Չոր-Մարդուանի նշանաւոր կռիւները և Հնչակեան հերոսներու քաջագործութիւններու վրայ ամենքը կը խօսէին և կը զմայլէին. կառավարութիւնը կը վախնար, որ զիս ազատելու փորձ մը չըլլայ այդ կողմերէն, ուստի ամենայն զգուշութեամբ կընէր իր իւրաքանչիւր քայլը: Իսթէնտերուն գացած ատեն երբ կը հանդիպէինք կիրճերու, զօրքերու մի մասն առաջ կերթար և երբ ապահով էր որ վտանգ չէ կայ, փողը կը փչէր և յետոյ մնացեալ գնդով զիս առաջ կը տանէին: Իսկ երբ հասանք Իսթէնտերունի մօտերը, զօրքերը ամենը յետ զրկուեցան, բացի սուվարներէն, որպէս զի քաղաքին մէջ զինուորաց ատանկ մեծ բաղմութիւն մը մէկ մարդու համար աղմուկ չը հանէր... Կաւ զնելով զիս զրկեցին Կ. Պօլիս՝ միշտ խիստ հսկողութեան տակ:

\*) Տես «Հնչակ» Թ. 4.

Մայրաքաղաքին մէջ տան օր կեդրոնական բանտը պահեցին, որմէ ետքը ստիպեալ յանձնեցին զիս ամերիկեան դեսպանին: Կարգադրութիւնն այնպէս էր եղած որ ես պիտի տաճկական հողը ձգէի ելնէի. իսկ դրամը կառավարութեանն յետ առնելու խնդիրը յանձնն առաւ կարգադրել ինքը ամերիկեան դեսպանը:

Մ. Կ.

**ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԴԵՊՔԸ.**

(Շարունակութիւն) 1)

Սրտատրոփ հայ և միւս քրիստոնեաները ամեն կողմից շրջապատուած թուրք և քուրդ բազմութեամբ միշտ այս և այն կողմ վազելով, օգնութիւն էին աղաղակում: Այդ իսկ րոպէին վրայ հասաւ 400 հոգուց բաղկացած մի վաշտ կանոնաւոր զօրք: Հայ և միւս քրիստոնեաները դիմեցին զօրքերի պաշպանութեան, բայց ինչ մեր կարծիքի բոլորովին հակառակը դուրս գալով բոլորովին յուսախար եղանք, որովհետեւ զօրքերը ուր որ տեսնուած էին մի քրիստոնեայ՝ առանց խնայելու սեռի և հասակի հրացանի բռնելով գետին էին փռում: Միւս կողմից ժանդարմերիայի փոխ հրամանատար Ազամէթ փաշան, շրջապատուած հեծեալ ոստիկաններով և հետեակ ժանդարմներով, «հա գուզուլարըմ զարաթ էլէին, գեափուրլարը գըրըն, մալը հէլալ տըր» (հա, զաւակներո, աշխատեցէք, անհաւատներին ջարգեցէք, ունեցածները հալալ է) խօսքերով և անձնական օրինակներով քաջալերում էր արգէն թուրք և քուրդ խուժանը, որոնց ոսկորները հայ արիւնով, իսկ մարմինները հայի քրտինքով է կազմուած:

Տեսարանը սարսափելի էր. սկսեցին կոտորել խանութների դռներն ու վաճառատուների երկաթեայ պահարանները ու յափշտակել ապրանքը. զօրքերն ու զօրապետները աւելի եռանդով էին անում աւարու ու թիւնը: Արհեստաւորների փոքրիկ աշակերտները թաւալվում էին թուրք կանոնաւոր զօրքի սուլիմների անողորմ հարուածների տակ, խանութպան հայը այնպիսի հրացանով գնդակահար էր լինում հէնց իր խանութի դռան սեմի վրայ:

Այդ րոպէում մետաքսագործների բազարի կողմից, բաղնիքից տուն էր վերագառնում Արուսեակ անուն հայ կինը. թուրք սպայներից մէկը իրա ձեռքում ունեցած ատրճանակով գնդակահար արեց նրան և իւր լելով գրկի եռամսեայ մանկիկը անցկացրեց այնտեղի մասվաճառանոցի երկաթեայ ճանկերից մէկին և անմեղ մանկիկը մի վայրկենական ըզայով աւանդեց իրա շիշիկը: Թուրք զօրքերի և ժանդարմների արձակած մահացու գնդակները երբէք չէին վրիպած իրանց նրպատակներից:

Հացագործ Մարտան և փիռաջի Մկրտիչը, որոնց խանութները մեծ մզկիթի դրան մօտին էին, իրանց խանութի պատանի գործաւորների հետ մէկտեղ ձգուելով հնոցի բոցավառ կրակի մէջ այրուեցան, խորովուեցան, որոնց յուսահատական ողորմելի աղաղակները մինչև հեռիները լսելի էին լինում: Մէկ խօսքով 2-3000-ից բաղկացած բազարի խանութները երեք ժամուայ մէջ մերկացան իրանց հարիւր հազարաւոր լերայի հարստութիւնից և նրանց քրիստոնեայ տէրերը ջարդուելով զոհ գնացին վայրենիներին: Միայն քաղաքի համար չէր այդ սև ուրբաթը, այլ միևնոյն

1) Տես «Հնչակ» թ. 5.

օրը միևնոյն գործողութիւնը շարունակվում էր չքակայ գիւղերի մէջ էլ:

Ղոտորածը ամենայն անգթութեամբ առաջ էր տարվում երբ բերդից մի փող հնչեցրին. բոլոր թուրք և քուրդ խուժանը ամիջապէս, այսինքն տասնուկէսին, հեռացան բազարից և 11-ին (ը. թ.) ամպի կոյտերի նման մի ծուխ բարձրանալով քօղարկեց գժբազդ Տիգրանակերտը: Հինգ րոպէ վերջը ծխին յաջորդեց մի բոցավառ ալիք որը հրեղէն լեզուներ արձակելով լափում էր բազարի բոլոր դատարկված խանութները:

Գա մի հրդեհ էր, որ կառավարութիւնը իրա պաշտօնեաների ձեռքով տուեց Սաման բազար անուանեալ հրապարակին որ դրանով ծածկէ իր վայրագութեան հետքերը և մոխիրների մէջ թաղէ սպանուած հազարաւոր քրիստոնեաների մարմինները: Չորս զանազան կողմերից հրդեհը իր կատաղի շարունակութեան մէջ էր:

Ժամը 12-ին (ը. թ.) ժանդարմերիայի փոխ հրամանատար Ազամէթ փաշան իր ժանդարմներով մտաւ ոսկերչների բազարը և մի առ մի կոտորել սկսաւ խանութների երկաթեայ պահարանները, քսակների մէջ լեցնել տուաւ այնտեղի թանկագին իրեղէնները և ուղարկեց կուսակալի մօտ:

Բազարից կողոպտված ամբողջ ապրանքը թուրք զօրքերի հսկողութեան տակ լեցվում էր Զիֆթէ-խան անուանեալ քարվանսարայն, ուր և ապաստանել էին 25-30 հայեր, որոնցից տասը հոգի 8-12 տարեկան արհեստաւորների որբ աշակերտներ էին:

Գիշերուան ժամը 4-ին (ը. թ.) դագարեց ուրբաթ օրուայ կոտորածը. այդ օրը կառավարութիւնը իր թուրք և քուրդ խուժան արբանեակներով բազարը աւարի առնելով և քրիստոնեայ խանութպան վաճառականներին կոտորելով զբաղեցաւ, միւս օրուան թողնելով թաղերի վրայ յարձակուելու անորժակը:

Այդ գիշեր ժամը 5-ին (ը. թ.) Տիգրանակերտի կուսակալ Էնիս փաշան և ժանդարմերիայի փոխ հրամանատար Ազամէթ փաշան, իրանց հետ ունենալով քաղաքացի ծամիլ փաշային, մտան Զիֆթէ խան քարվանսարան, այնտեղ ապաստանող հայերը սուլիմներով ըսպանուեցան զօրքերի կողմից և դուրս տարուեցան ու ձգուեցան բազարի հրդեհի մէջ և այրուեցան. զրանցից միայն Կարապետ ու Ալլահաթը ժամանակին կտուր բաձրացած լինելով դիտած են վերոյիշեալ փաշանների ընթացքը և յետոյ կտուրից կտուր թռչելով ապաստանեցան հայոց մեծ թաղը:

Նրբ այդ փաշանները զբաղած էին աւարի բաժանման գործողութիւնով, մի քուրդ բաշի-բօզուք երևալով դռան սեմին վրայ կատաղած դէմքով խօսեցաւ հետևեալը. — «Փաշա էֆ. թագաւորը հրամայած էր, որ մենք կոտորենք գեափուրներին և աւարի առնենք նրանց բոլոր հնչքերը. դուք մեղ կանչեցիք և անձամբ հաղորդեցիք այդ հրամանը. այժմ ինչո՞ւ դուք միայն բաժանում էք ձեր մէջ և մեղ զոկում էք մեր իրաւունքից»: Հաղիւ էր վերջացրել իր խօսքը երբ շփուեց նրա աջ կշտին սուլիմի փայլուն երկաթը և նա անշնչացաւ սառչեցաւ երկու րոպէում:

Ղերջապէս փաշաները իրանց մէջ բաժանելով տհազին քանակութեամբ վաճառականական ապրանքները, լեցրին առանձին սենեակների մէջ և յանձնելով թուրք զօրքերի հսկողութեան հեռացան գնացին այն տեղից:

Այդ գիշեր բոլոր թուրք թաղերում գտնուող պաշտօնեաների և մեծամեծների տներում աւարը բաժնելով էին զբաղուած: (Կը շարունակվի.)

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐԿԻԱՅՈՒՄ**

Սուլթան Համիտ Տեաւեալ պատուանշանները (° °) «Շնորհաց» Ռուսիոյ Չարին պաշտօնեաներուն:

Ահանակուռ Նըշանը Իմթիաղ, Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Լոպանովի: Ահանակուռ Մէճիտիէ: Կ. Պոլսոյ ուռս գեսպան Նէլիտովի: Առաջին կարգի Մէճիտիէ, Կ. Պոլսոյ ուռսական գեսպանատան առաջին թարգման Մաքսիմովի:

Հայերու արիւնին գինը եղող այս ամօթալի վարձատրութեան առթիւ Կ. Պոլսէն կը Տեաւագրեն անգլիական թերթերուն.

«Քաղաքական մեծ կարեւորութիւն կ'ընծայուի ոյդ պատուանշաններուն շնորհումէն: Մասնաւորապէս ուշագրաւ կը համարուի Իմթիաղի շքանշանը որ սովորաբար վեհապետներու կը տրուի: Այդ պատուանշաններուն շնորհումը կը համարուի իբր սուլթանին գնահատութեան արտայայտութիւնը հայկական խնդրին մէջ Ռուսիոյ Տեաւեալ քաղաքականութեանը, և վերջնական լըուը ուռսաթրքական լրիկ համաձայնութեան:

«Մաքսիմովին տրուած պատուանշանը չունի իր նախընթացը: Գործի վրայ գտնուող օտար առաջին թարգմաններուն մինչև հիմա այդպիսի պատուանշան չէր տրուած: Առաջին թարգման մը երբ պաշտօնէն քաշուի կամ գեսպանութեան աստիճանին բարձրանայ ան տան կը տրուի պատուանշան: Մաքսիմովի համար եղած բացառութիւնը այն պատճառաւ է որ այդ առաջին թարգմանը կարևոր դեր մը խաղաց Ռուսիոյ և թուրքիոյ վերաբերեալ համաձայնութեան մասին Երլտղի պալատը կատարուած բանակցութիւններու մէջ:» (\*)

Անգլիական մամուլը քաղաքական տեսակէտով շատ դժգոհ է այս վարձատրութիւններու մասին: «Մօրնինկ Բօսթ» կը հարցնէ թէ՛ արդեօք սուլթանը կը կարծէ որ հայկական խնդրին մէջ Ռուսիոյ կողմէն գտած աջակցութիւնը փոխարինած կըլլայ այս պատուանշաններովը որոնք մատուցուած ծառայութիւններու հաշիւը գոցեն: Եւ միթէ, կըսէ այդ թրքասէր թերթը, Ռուսիա բաւական կը համարի այս փոխարինութիւնը. արդեօք հրաժարած է համասլաական քաղաքականութենէն, կամ մոռցած է այլ ևս Իննստիէֆի աւանդութիւնները:»

Ռուսիոյ դիտաւորութիւններու մասին մտահոգութիւնը արդէն սկսած է տիրել Անգլիոյ մէջ: Հայերուն արիւնի գինը միայն պատուանշաններն պիտի ըլլան:

Այս առթիւ անգլիական թերթերու մէջ կը կարգանք Տեաւեալը. —

«Գ. Կլատսթոն Լօնտօն գտնուած միջոցին հայկական խնդրի մասին իր կարծիքները անկեղծօրէն յայտնեց և ինչ ինչ կէտերու համար ալ բուն կերպով խօսեցաւ:

«Երէկ կէս օրէն ետքը այս հարցին առթիւ երկարատե տեսակցութիւն ունեցաւ Գ. Սթէյնսընի հետ որ այցելած էր իւրեն. նոյն օրը աւելի կանուխ Գ. Կլատսթոն տեսակցեցաւ Արկայլի դուքսին հետ:

\*) Մաքսիմով այդ պատուին արժանանալու ուրիշ տիտղոս մնն ալ ունի. նազովի լրտեսն է եւ գործակալը Կ. Պոլսոյ գեսպանական եւ սեղանատրական, մէկ խօսքով Հայ-Լայֆ կոչուած շքանշաններու մէջ: Անխոսի կը լրտեսէ ամէն տեղի՝ ամէն կրօնքի պատկանողները. իր տեղեկագիրները շարունակ բերանացի կը հաղորդէ:

«Գ. Կլատսթոն չը վարանեցաւ յայտնելու իր զարմացումը և խորին ցաւը որ Ռուսիոյ արտաքին գործերու նախարարը, Կ. Պոլսոյ ուռսական գեսպանը մասնաւոր հանգամանք ունեցող այս կացութեան պահուն ուղեցին ընդունիլ թրքական պատուանշաններ:

«Աւելցուց թէ այս իրողութիւնը միանալով հայկական խնդրին մէջ Ռուսիոյ բունած նոր ընթացքին, ինչպէս տկներև կերևի վերջերս հրատարակուած Պլուուուքէն և այն իրողութիւնը թէ Ռուսիա Սուլթանը մըղելու համար ձնշում բանեցնելու յատկապէս նպատաւոր դերքի մէջ կը գտնուի, այն պարագաները կըրնան Ռուսիան բարոյապէս պատասխանատու բունել Հայաստանի մէջ տեղի ունենալիք նորանոր շարիքներուն համար, չը նայելով և սչ մի արդարացուցման որ ան կուղենայ առաջ բերել անցեալի նկատմամբ:»

—Կ. Պոլսոյ անգլիական գեսպանը Բամաղանի յիֆթար«ի գնաց Երլտղի պալատը—նախանձելով անշուշտ իր ուռս պաշտօնակցին դափնիներուն: Կ. Պոլսէն կը Տեաւագրեն անգլիական թերթերուն թէ՛ տեղին անգլիական գաղթականութիւնը խորապէս ցաւած է գեսպանին այս գործին համար զգալով թէ, կըսէ Տեաւագիրը, նոյն իսկ դիւանագիտական պահանջները չեն կրնար պարտաւորել անգլիացի «ձէնթմէն» մը որ զօհէ իր անձնական արժանապատուութիւնը մասնակցելով այսպիսի արիւնկղակ բռնակալի մը սեղանին:»

**ԿԱՅԿԱԿԱՆ ԴԱՏԸ ԵՒՐՕՊԱՅՈՒՄ.**

Կ. Պոլսէն «Տէյի Նիւզ» կը գրեն Տեաւեալը.

Երլտղի հաւաստի աղբիւրէ տեղեկացայ թէ հայկական խնդրին վրայ Անգլիոյ երեսփոխանական ժողովին մէջ բացուած մեծ վիճարանութեան միջոցին արտաքին գործերու խորհրդական Գ. Քըրքնի արտասանած ճառը նոյն գիշերը իսկ հաղորդուեր է սուլթանին Տեաւագրով, որուն վրայ խորին տպաւորութիւն ըրած է. սուլթանը զգացեր է թէ տրուած քուէն կուսակցական չէր, այլ ընդհանուր ազգային յանձնարարութիւն մը որով ապագային ուրիշ գործողութիւններու ձեռնարկել կարելի է: Սուլթանը շատ յուզուեցաւ և պատգամաւոր մը զօրկեց Սըր Ֆիլիք Քըրքնին ծանուցանելով թէ «Քիւրտիստանի մէջ կատարեալ խաղաղութիւն կը տիրէ»: Երլտղին պալատը ապականող մօլի մակաբոյծները և անխիղճ անառակները հիմա յստակ կերպով կը տեսնեն թէ թիւրքիոյ այս մեծ խնդրին վրայ տակաւին իր վերջին խօսքը չէ ըսած բրիտանական ժողովուրդը որ թէև առժամայ կերպով պարտուած է քանի մը պետութիւններու իրեն դէմ սարքած պախարակելի կարգադրութեան մը պատճառաւ սակայն լորդ Սալդարի կը կրնայ անպայման ժամանակով խաղաղ ազգային զգացումին հետ: Կը լուրի թէ Լօնտօնի Օսմանեան գեսպան Քօսթաքի փաշա արդէն հաղորդած է Մեծ Եպարքոսին որ Անգլիոյ մէջ թէ՛ մամուլին միջոցաւ, թէ՛ առանձինն տեսակցութիւններու մէջ բարձրաձայն զգուանք կը յայտնուի սուլթանին վարչական եղանակներու մասին:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ու մանդատ ուղարկել Տեաւեալ հասցեով. — M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush. London. W. [Angleterre].